



Զահրատ

Տիկին Բրաժոյ

Տիկին Բրաժոյ ինչպէս էք
Ինչպէս ըլլաք ծովէն ելած ձուկի պէս
Ծաղարանը նստեր էք
Պաղպաղակ չէ՛ ձեր մենութիւնը կը լիզէք ծովուն դէմ
Հին փառքերու ծովէն ելած ու չլնորած ձուկի պէս
Տիկին Բրաժոյ լքուեր էք

Տիկին Բրաժոյ բարեւ ձեզ
Ձեր փափկասուն գեղեցկութիւնն ինչպէս է
Ուր է չկայ քսան տարի առաջ էր
Այն ատեն դուք կին գեղանի եւ պարմանի նորելուկ
Ձեր իզութեան հրապոյրին անձնատուր
Շատերու հետ ձեր բոլորտիքն էի շրջեր սիրտս թունդ
Ձեր անմատոյց մտերմութեան մէկ փշրանքին տիրանալու գուր յոյսով
Չէիք գիտեր որ յիշէք
Ծաղարանին մէկ անկիւնը նստեր էք
Պաղպաղակ չէ՛ ձեր անցեալի հպարտութիւնը կը կրծէք ծովուն դէմ
Հիացումի ծովէն ելած ու մոռցուած ձուկի պէս
Պարզ բարեւի մը ծարաւով տալպտկող ձուկի պէս
Նստեցէք
Մնաք բարով Տիկին Բրաժոյ Տիկին Ձուկ